

ՏՕԼՍՏՈՅԻ ՄԻ ՆՈՐ ՆԱՄԱԿԸ

Նորերս ռուսաց թերթերից մէկը՝ „Миссіонерское Обозрѣ-
ніе“, տպել է 1. Ն. Տոլստոյի հետեւեալ հետաքրքրական նամակը:

Ես եկել եմ՝ այն համոզման, — ոչ թէ մտածողութեան
ճանապարհով, այլ իմ երկար կեանքի փորձով — որ մարդ-
կային կեանքը հոգւոյ կեանք է: Մարդս հոգի է, աստուա-
ծութեան մասն է, որը պարփակուած է յայտնի սահման-
ների մէջ և այդ սահմանները մենք գիտակցում ենք, ինչ-
պէս մի մայր. բայց միայն հոգւոյ կեանքը ենթակայ չէ
ապականութեան, ոչ էլ չարչարանքի: Այդ կեանքը հա-
ւասարապէս միշտ աճում է և ընդլայնում է այն սահ-
մանները, որոնց մէջ պարփակուած է: Սակայն մարդկանց
յատուկ է մոլորութիւնը, երբ մտածում են, թէ կեանքի
էութիւնը սահմանափակուած է այն շրջանով, որի մէջ
գտնւում է կեանքը, այսինքն նիւթի մէջ: Այդ մոլորման
ազդեցութեան ներքոյ է, որ մենք նայում ենք նիւթական
չարչարանքների, մանաւանդ հիւանդութեան և մահուան
վրայ, ինչպէս դժբախտութեան վրայ, մինչդեռ այդ չար-
չարանքները (որ միշտ անխուսափելի են, ինչպէս մահը
ինքը) միայն խորտակում են մեր հոգին ճնշող սահման-
ները և մեզ մտածել տալիս — նիւթականութեան գրաւ-
չութիւնը ոչնչացնելով — որ մարդս իսկապէս ճանաչի իւր
կեանքը, իբրև հոգեկան և ոչ թէ նիւթական էակի: Որ-
քան մեծ է նիւթական չարչարանքը և այն, որ մեզ թը-
ւում է ամենամեծը — մահը, այնքան աւելի հեշտ, այնքան
աւելի անխուսափելի կերպով է մարդս ազատւում նիւ-
թական կեանքի գրաւչութիւնից և այնքան աւելի հաս-
տատ է ինքն իրեն գիտակցում հոգւոյ մէջ: Իրաւ է, երբ
մարդս հոգւոյ մէջ ինքն իրեն գիտակցում է, չի ստա-
նում այն սուր հաճոյքները, որ մարդու տալիս է կենդա-
նական, նիւթական կեանքը, դրա փոխարէն նա շօշափելի
կերպով զգում է կատարեալ ազատութիւն, անխոցելիու-

թիւն, անքակ հաստատութիւն,—նա զգում է իւր միաւորութիւնը Աստուծոյ հետ, որ ամենի հիմքն ու էութիւնն է։ Այն ժամանակ մահը այլ ևս գոյութիւն չունի, կամ թէ հանդիսանում է իբրեւ ազատումն և վերածնունդն, և ով փորձով զգացել է այդպիսի դրութիւն, նա այդ չի փոխիլ ոչ մի նիւթական վայելչանքի հետ։ Այդպէս ես խօսում եմ, որովհետեւ ինքս արտասովոր ոյժով այդ բանը փորձով զգացել եմ իմ հիւանդութեան ընթացքում։

Երբ ես ապաքինում էի, փորձով իմ մէջ գիտում էի երկու հակադիր զգացմունք. մէկը—կենդանու ուրախութիւնն էր, որ նորից կեանք էր ստանում, միւսը — հոգւոյ էութեան ամսոսանքը, որ կորցնում էր հոգւոյ գիտակցութեան պարզութիւնը, որ ինձ համար զգալի էր իմ հիւանդութեան ընթացքում։ Բայց չնայած ժամանակաւոր կեանքի բոլոր փորձութեանը, որ նոր ոյժով արթնացել էր ապաքինութեանս ընթացքում, ես հաւատում եմ, գիտեմ, որ հիւանդութիւնը ինձ համար ամենամեծ շնորհքն էր։ Նա ինձ տուաւ այն, ինչ որ չէին կարող տալ ոչ իմ մտածմունքները և ոչ էլ ուրիշ մարդկանց մտածմունքները և ինչ որ ես ստացայ, այլ ևս չեմ կորցնիլ, այլ ինձ հետ կվերցնեմ։ Բայց, անկախ այդ հիւանդութիւնից, յիշելով իմ կեանքը, պարզ տեսնում եմ, որ շատ բան, որ ինձ պատճառել է չարչարանք, ինձ համար ճշմարիտ բարիք էր, որովհետեւ ինձ հեռացրել էր նիւթական բարիքի հետամտութիւնից և ինձ առաջնորդել էր ձեռք բերելու իսկական բարիք—հոգւոյ բարիք։ Ի դուր չէ ժողովրդական իմաստութիւնը ասուի հիւանդութիւններին, հրդեհներին և այն ամեն դժբախտութիւնների մասին, որոնք մարդկային կամքից դուրս են. «Աստուած այց է եկել»։

Աւելի վատ բան չկայ ճշմարիտ բարիքին հասնելու նկատմամբ, քան այն՝ որ մարդիկ իրենց և ուրիշներին են ցանկանում — առողջութիւն, հարստութիւն, փառք։

Թող տայ Աստուած, որ զգայիք տանջանքների և նիւթական մահուան անխուսափելի մերձանալու մեծ բարե-

գործութիւնը: Ճշմարիտ է, այդ բանի համար անհրաժեշտ է հաւատալ իւր հոգւոյ էութեանը—աստուածային մասնիկին, որը ենթակայ չէ ոչ փոփոխութեան, ոչ նուազման, ոչ էլ տանջանքների կամ ոչնչացման: Միայն, ի նրկատի ունենալով ձեր նամակը, հիմք ունիմ կարծելու, որ հաւատում էք այդ բանին. իսկ եթէ չէք հաւատում, վերջ ի վերջոյ այդ բանին կգաք:

Թող Աստուած օգնէ ձեզ և ամենից առաջ նա, որ ձեր մէջն է:

Մ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Տարւոյս փետրուար ամսին մէկը Պետերբուրգի Խաճակեան տաճարից, աղքատութիւնից ստիպուած՝ դողացել էր յիսուն հազարի արժողութիւն ունեցող մարդարիտներ, որոնք յետոյ դադանի ոստիկանութեան ձեռք առած խիստ միջոցներով առանց պակասութեան գտնուեցան: Գողացողը յանձնուեցաւ դատարանի, որը դատապարտեց նրան եօթը տարուայ տաժանակիր աշխատանքի: Այս առթիւ „Новости“-ի մէջ հետեւալ ղիտողութիւններն ենք կարդում: Արդեօք եկեղեցիներում և վանքերում հարկաւոր են արժէքաւոր իրեր: Այն մարդիկ, որոնք թէև ոճրագործութեան ծանօթ չեն, բայց թոյլ կամք ունին, գայթակղւում են եկեղեցիների մէջ այգպիսի թանկազին իրեր ատենելով: Նոյն բանն է պատահել և յիշեալ գողի հետ, որը հրապուրուելով Խաճակեան տաճարի հարստութիւնից, չար միտք յղացաւ, բայց բարեբաղդաբար չկարողացաւ այդ մտադրութիւնը գլուխ բերել: